



**ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ**  
**ՀԻՄՆԱԿՅԻՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ԱՐԵՄՏԵԱՆ ԹԵՄԻ**  
**WESTERN PRELACY**  
**OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA**  
 Archbishop Moushegh Mardirossian, Prelate  
 Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745, E-mail: [Prelacy@aol.com](mailto:Prelacy@aol.com)



**ՄՇԱԿՈՅԹԻ ԱՄՍՈՒԱՆ ԱՌԹԻ**  
**Ս. ՊԱՏԱՐԱԳ ԵՒ ԳԻՐՔԵՐՈՒ ՑՈՒՑԱՅԱՆՆԴԵՍ**  
**ՕՐԵՆՃ ԲԱՈՒՆԹԻ Ս. ԲԱՌԱՍՆԻՑ ՄԱՆԿԱՆՑ ԵԿԵՂԵՑՈՅ**  
**ՄԷՉ**

Կիրակի, Հոկտեմբեր 21-ին, մշակոյթի ամսուան առիթով, Օրենճ Բաունթի Սրբոց Բառասնից Մանկանց եկեղեցւոյ մէջ, Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Ս. Մուշեղ Ս. Արք. Մարտիրոսեան, Ս. Պատարագ մատուցեց եւ օրուան խորհուրդը ներկայացնող իր պատգամը փոխանցեց, ինչպէս նաեւ կատարեց գիրքերու ցուցահանդէսին պաշտօնական բացումը:

Սուրբ Խորանին սպասարկեցին Ազգ. Առաջնորդարանի Զրիստոնէական Դաստիարակութեան բաժանմունքի վարիչներէն՝ Գերայ. Տ. Միւռն Ծ. Կրդ. Ազնիկեան եւ եկեղեցւոյ հոգեւոր հովիւ Արժ. Տ. Հրանդ Քիւնյ. Երեցեան:



Նախաձեռնութեամբ շրջանի հոգեւոր հովիւին, հոգաբարձութեան ու Արի Կիրակոս Մինասեան Ազգային Վարժարանի տնօրէնութեան ու ծնողա-ուսուցչական մարմինին, Ս. Պատարագի աւարտին, եկեղեցւոյ կից «Ղուկասեան» սրահին մէջ, Մշակոյթի ամսուան առիթով, տեղի ունեցաւ Սրբոց Թարգմանչաց տօնին նուիրուած գիրքերու աւանդական

ցուցահանդէս վաճառքը:

Աւետարանի ընթերցումէն եւ օրհնութեան աղօթքէն ետք, Առաջնորդ Սրբազանը բացուած յայտարարեց հայ գիրքերու ցուցահանդէսը, գնահատեց վարժարանի տեսչութիւնն ու ծնողական յանձնախումբը, որոնք տարիներու բարի աւանդութիւն դարձուցած, ամէն Հոկտեմբեր ամսուան ընթացքին կը կազմակերպեն հայ գիրքերու նուիրուած ցուցահանդէս-վաճառք: Սրբազանը օրհնեց եւ գնահատեց աշխատանքն ու նուիրումը Ս. Բառասնից Մանկանց եկեղեցւոյ Հովիւին, հոգաբարձութեան, երեսփոխանական եւ տիկնանց միութեան կազմերուն, ինչպէս նաեւ եկեղեցւոյ սարկաւազաց ու դպրաց դասերուն, որոնք, անսակարկ ու մեծ

սիրով կը ծառայեն հայ եկեղեցւոյ ու կը սատարեն անոր պայծառութեան աշխատանքներուն:

## **CELEBRATION OF ARMENIAN CULTURE MONTH AT FORTY MARTYRS CHURCH IN ORANGE COUNTY**

On Sunday, October 21, 2007, the Armenian culture and spirit was celebrated at Forty Martyrs Church in Orange County with Episcopal Divine Liturgy and a book fair. H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, celebrated Divine Liturgy and delivered the sermon. He was assisted at the altar by Most Rev. Fr. Muron Aznikian and parish pastor Rev. Hrant Yeretsian.



At the conclusion of Divine Liturgy and requiem service, the Prelate and clergy headed to “Gugasian” Hall in a procession where a book fair/sale organized by the administration and parent support committee of A.G. Minassian Armenian Day-School was to take place. The Prelate conducted the official opening of the fair during which he commended the

administration and the parents who have made the book fair a beautiful annual tradition. The Prelate also commended the devotion of the parish Pastor, Board of Trustees, Delegates, Ladies Auxiliary, Deacons and choir members who selflessly serve our church.

### **ՈՒԱՇԻՆԿԹԸՆ ՏԻ. ՍԻ.Ի ՄԵԶ ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐՈՒՆ, ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱԶԱՆԸ ՎԵՐ Կ'ԱՌՆԷ ԱՐԴԱՐՈՒԹԵԱՆ ԵՒ ՄԱՐԴԿԱՅԻՆ ԻՐԱԲԱՆՑ ՄԵՐ ՊԱՅԱՆՁԸ**

Թիւ 106 բանաձեւին որդեգրման ճամբով՝ Հայկական Ցեղասպանութեան պաշտօնական ճանաչում ապահովելու նպատակով տարուող աշխատանքները վերջին շաբաթներուն ներգրաւած են ամերիկեան այս ասիերու ամբողջ հայութիւնը, իր հոգեւոր ու քաղաքային-քաղաքական առաջնորդներով եւ ներկայացուցիչներով: Ամենուրեք տեսակցութիւններ ու հաղորդակցութիւններ տեղի կ'ունենան Միացեալ Նահանգներու քոնկրետի անդամներու եւ ազդեցիկ այլ դէմքերու հետ, որպէսզի ներկայացուցիչներու Տան արտաքին յարաբերութեանց յանձնախումբին կողմէ որդեգրուած այս բանաձեւը հաստատուի նաեւ քոնկրետին կողմէ եւ այսպէսով, Միացեալ Նահանգներու պետութիւնը միանայ Ցեղասպանութիւնը ճանչցողներու փաղանգին:

Այս աշխատանքներուն զօրակից է Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Տ. Մուշեղ Արք. Մարտիրոսեան, ու քաջալեր կը հանդիսանայ Հայ Դատի Յանձնախումբին տարած գործունեութեան:

Սօտաւորապէս ամիս մը առաջ, ու Հայ Դատի Յանձնախումբին հետ համագործակցաբար, որոշուած էր որ Առաջնորդ Սրբազանը այցելութիւն մը տայ Ուաշինկթըն եւ այդ նպատակով ճշդուած էին շարք մը ժամադրութիւններ: Այցելութիւնը զուգահեռաբար այն օրերուն, երբ թիւ 106 բանաձեւին առնչութեամբ համատարած հանդիպումներն ու խորհրդակցութիւնները հասած էին բարձրակետի մը: Առաջնորդ Սրբազանը Ուաշինկթըն ժամանեց Երկուշաբթի, 22 Յոկտեմբերի երեկոյեան եւ յաջորդող երկու օրերուն, իր կողքին ունենալով Ուաշինկթընի Ս. Խաչ եկեղեցւոյ Հոգեւոր Հովիւ Արժ. Տ. Սարգիս Բիւյ. Աքթաւուքեանը եւ Հայ Դատի Յանձնախումբի ներկայացուցիչներ, շարք մը հանդիպումներ ունեցաւ: Առաջնորդ Սրբազանին հանդիպումները ընդգրկեցին առաւելաբար արեւմտեան նահանգներու՝ Զալիֆորնիոյ, Արիզոնայի, Նեւատայի, Զոլորատոյի, Եուրօպի եւ Օրեկոնի ներկայացուցիչները կամ անոնց գրասենեակներու վարիչները: Առաջնորդ Սրբազանը տեսակցութիւններ ունեցաւ ճորճ Ռատոնովիչի (Հանրապետական, Զալիֆորնիա-Ֆրեզնո), Էտուըրտ Ռոյսի (Հանր., Զալիֆորնիա-Օրեւնճ Բաունթի), Պրետ Շըրմընի (Դեմոկրատ, Զալիֆորնիա), Աննա Էշուի (Դեմկ.Զալիֆորնիա) եւ ծերակուտական Տայէն Ֆայնսթայնի (Դեմկ., Զալիֆորնիա) հետ: Առաջնորդ Սրբազանը նաեւ այցելեց ճոն Փորթըրի (Հանր., Նեւատա), ճոն Շատելի (Հանր. Նեւատա), Էտ Փըրլմուլթըրի (Դեմկ., Զոլորատո), Ռիչ Ռենզիի (Հանր., Արիզոնա), Կապրիէլ Կիֆորտզի (Դեմկ. Արիզոնա), Տէյվիտ Վուի (Դեմկ. Օրեկոն) եւ Տէյվիտ Տրայըրի (Հանր. Զալիֆորնիա) գրասենեակները, ուր ընդունուեցաւ քոնկրետականներու օգնականներուն կամ գրասենեակի վարիչներուն կողմէ: Առաջնորդ Սրբազանը շեշտը դրաւ մարդկային ու արդարութեան այն հարցերուն վրայ, որոնք կ'առնչուին Հայկական Յեղասպանութեան ու անոր յաջորդած անմարդկային այլ արարքներու, մատնանշելով, որ անարդարութիւնը անսրբագրելի թողելով՝ դուռը բաց կը ձգուի նորանոր անարդարութեանց դիմաց: Ան գնահատանք եւ շնորհակալութիւն արձանագրեց արդարադատ պետական անձնաւորութեանց կեցուածքին համար, մաղթեց, որ այս զօրակցութիւնը շարունակուի եւ օրինակ ծառայէ այլ ներկայացուցիչներու:

Նշենք նաեւ, որ Ուաշինկթըն իր այցելութեան ընթացքին, Առաջնորդ Սրբազանը հարցազրոյցներ շնորհեց Voice of America եւ Երկիր Մետիա պատկերասփիւռի կայաններու թղթակիցներուն հետ:

## **PRELATE EMPHASIZES JUSTICE AND HUMAN RIGHTS DURING HIS VISIT TO WASHINGTON D.C.**

Over the past few weeks great efforts have been made by our community with regards to the adoption of House Resolution 106 which officially recognizes the Armenian Genocide by the United States House of Representatives. There have been meetings and communications with

members of Congress and the community has mobilized to urge the full House to join the House Foreign Affairs Committee in adopting the resolution. H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, has strongly supported and joined the Armenian National Committee in their efforts. In coordination with the ANC, over a month ago an official visit to Washington D.C. was planned which happened to coincide with a time when attention to and awareness of HR 106 was at its peak.

The Prelate departed for Washington D.C. on Monday, October 22<sup>nd</sup>, to meet with Congress members and legislative staff. Accompanying the Prelate on his visits was Rev. Sarkis Aktavoukian, pastor of Holy Cross Church in Washington, D.C., and representatives from the Armenian National Committee.

During the duration of their visit, the Prelate and delegation met with various Congress members including California Senator Dianne Feinstein, and Representatives George Radanovich, Edward Royce, Brad Sherman, and Anna Eshoo, as well as visited the offices of Rep. Jon Porter, John Shadegg, Ed Perlmutter, Rich Renzi, Gabrielle Giffords, David Wu, and David Dreier where they met with legislative directors and assistants.

In his meetings, the Prelate stressed the moral significance of recognizing the Armenian Genocide, stressing that when injustices against humanity are overlooked it invariably leads to further injustices. The Prelate commended and thanked the Congress members for their support and expressed hope that their principled stand on this issue sets and example for all the members of the House of Representatives.

Alongside his official visits, the Prelate also gave interviews to Voice of America and Yerkir Media.

## **ԼՈՍ ԱՆՃԵԼՈՍԻ ԶԱՆՃՆԱԽՈՒՄՔԻՆ ԿԸ ՎԵՐԱԳԱՍՏԱՏԵ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՃԱՆԱԶՈՒՄ ՏՈՒՈՂ 106ԻՆ ՈՐՈՇՈՒՄԸ**

Նախաձեռնությամբ Հայ Դատի Յանձնախումբին, Լոս Անճելլոսի քաղաքապետարանը բանաձեւ մը որդեգրեց, պահանջելով, որ քոնկրետը Հայոց Ցեղասպանութեան ճանաչում տուող թիւ 106 որոշումը որդեգրէ:



Երեքշաբթի, 23 Հոկտեմբերի առաւօտեան, Լոս Անճելլոսի քաղաքապետարանի հերթական նիստի օրակարգի հարցերէն մէկն էր Հայոց Ցեղասպանութեան ճանաչման Բանաձեւ թիւ 106-ի քննարկումը, որու մասին քաղաքապետարանի անդամներ խօսք առին:

Ներկայ էին քաղաքապետը՝ Անթոնիօ Վիերակոսա, Խորհրդարանի նախագահը՝ Էրիք Կարսէթի, քաղաքապետարանի ու Հայ Դատի անդամներ եւ Ցեղասպանութենէ վերապրողներ, Գերպ. Տ. Միւռն Ճ.

Վրդ. Ազնիկեան եւ Ս. Սարգիս եկեղեցւոյ հոգեւոր հովիւ՝ Արժ. Տ. Խորէն Զհնյ. Պապոշեան:

Բացման աղօթքը կատարեց Գերպ. Տ. Միւռն Ծ. Վրդ. Ազնիկեան, որ յանուն Առաջնորդ Սրբազան Զօր, շնորհակալութիւն յայտնեց Լոս Անճելըսի քաղաքապետարանին, որդեգրուած բանաձեւին նկատմամբ իրենց վերահաստատման համար, եւ յոյս յայտնեց որ յառաջիկայ ամիսներու ընթացքին նաեւ, Ամերիկայի Ներկայացուցչական Տունը նման որոշում մը որդեգրէ եւ հաստատէ Զայոց Յեղասպանութեան պատմական իրողութիւնը:

## **LOS ANGELES CITY COUNCIL REAFFIRMS ITS SUPPORT OF HOUSE RESOLUTION 106**

On the morning of Tuesday, October 23, a gathering took place at Los Angeles City Hall with the participation of Mayor Antonio Villaraigosa, City Council President Eric Garcetti and council members, Armenian National Committee representatives, and genocide survivors.

Representing the Prelate were Very Rev. Fr. Muron Aznikian and Rev. Khoren Babochian. At the gathering, which was initiated by the ANC, the mayor and council members made a proclamation urging the House of Representatives to adopt House Resolution 106 in recognition of the Armenian Genocide.

On behalf of the Prelate, Most Rev. Fr. Muron Aznikian delivered the invocation and thanked the City Council for their affirmation and support of HR 106 and expressed hope that the full House will adopt a similar stance on this matter.

## **ՀԱՐԱՎԱՅԻՆ ԲԱԼԻՖՈՐՆԻՈՅ ԶՐԴԵՅՆԵՐՈՒ ՊԱՏՃԱՌԱԾ ԱԻԵՐՆԵՐՈՒՄ՝ ՅԱՏՈՒԿ ԱՂՕԹՔ ԵՒ «ՏԵՐ ՈՂՈՐՄԵԱ» ԹԵՄԻՍ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԸՆ ՆԵՐՍ**

Ծանօթ ու ականատես եւք, որ անցեալ շաբաթավերջէն ի վեր, Բալիֆորնիոյ հարաւային շրջանները զոհ կ'երթան լայնատարած հրդեհներու, որոնք իբրեւ բնական աննախընթաց աղէտ՝ կը հարուածեն հարիւր-հազարաւոր բնակիչներ ու կ'աւերեն անոնց ստացուածքները, բնակարանները: Արձանագրուած են տասնեակ զոհեր, բազմաթիւ վիրաւորներ, գաղթական դարձած են շուրջ մէկ միլիոն բնակիչ:

Թեմիս բարեխնամ Առաջնորդ Սրբազան Զօր տնօրինումով, Կիրակի, 28 Զոկտեմբերին, մեր եկեղեցիներուն մէջ «Տեր Ողորմեա»ի յատուկ աղօթք պիտի բարձրացուի առ Աստուած, որպէսզի մարդկութեան խնայուին նման աղէտներ:

Այս առիթով, Առաջնորդ Սրբազան Զայրը զօրակցական նամակ մը յղեց Բալիֆորնիոյ նահանգապետ Առնոլտ Շուվարցընսկըրի, ցաւ յայտնելով

աղետին հետեւանքներուն համար ու դրուատելով աղետեալներուն փրկութեան փութացող հրշեջներուն անձնուիրութիւնը:

## **PRAYERS FOR THE VICTIMS OF THE CALIFORNIA WILDFIRES**

By the ordinance of the Prelate, on Sunday, October 28, special prayers will be said in all Prelacy churches for the victims of the wildfires that ravaged Southern California earlier this week, which resulted in the loss of life and thousands of homes.

In this regard the Prelate also sent a letter to Governor Arnold Schwarzenegger expressing his sympathies for the devastation caused by the fires and offering prayers to those whose lives were destroyed and to the firefighters who risked their lives to protect their fellow man.

### **«ՀԱՅ ԼԵՉՈՒ»Ի ՏԱՐԻՆ ՆՇՈՂ ՏՕՆԱԿԱՏԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ**

Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Վեհափառ Հայրապետը 2007 տարին հռչակած է Հայ Լեզուի Տարի: Այս մեկնակետով, տօնակատարութիւններ եւ ձեռնարկեր տեղի կ'ունենան գաղութիս մէջ:

Հովանաւորութեամբ Թեմիս բարեխնամ Առաջնորդ Սրբազան Հօր, եւ կազմակերպութեամբ Կլենտէյլի Ս. Աստուածածին եկեղեցւոյ հովիւներուն եւ հոգաբարձութեան, Հայ Լեզուին նուիրուած տօնակատարութիւն մը տեղի պիտի ունենայ Կիրակի, Հոկտեմբեր 28-ի երեկոյեան ժամը 6-ին, Կլենտէյլ Community College-ի auditorium-ին մէջ:

Օրէնճ Քաունթիի Սրբոց Քառասնից Մանկանց եկեղեցւոյ հոգաբարձութիւնն ու տիկնանց Միութիւնը, գործակցաբար շրջանի Ազգային վարժարանին եւ քոյր միութիւններուն, կազմակերպած են Համագաղութային Մշակութային ձեռնարկ մը, նուիրուած Հայ Լեզուի Տարուան: Ձեռնարկը տեղի պիտի ունենայ Կիրակի, Հոկտեմբեր 28-ին, կ.ե. ժամը 5-ին, եկեղեցւոյ կից «Ղուկասեան» սրահին մէջ, Օրէնճ Քաունթի: Ձեռնարկին հասոյթը ամբողջութեամբ պիտի յատկացուի Օրէնճ Քաունթիի Արի Կիրակոս Միկասեան Ազգային վարժարանին:

## **CELEBRATION OF THE ARMENIAN LANGUAGE**

In response to the proclamation of H.H. Aram I, Catholicos of the Great House of Cilicia, of 2007 as the Year of the Armenian Language, there are numerous community events being planned in celebration of our language.

St. Mary's Church of Glendale Pastors and Board of Trustees have organized an event to take place on Sunday, October 28<sup>th</sup>, at 6:00 p.m. in the Glendale Community College auditorium.

The Forty Martyrs Church of Orange County Board of Trustees and Ladies Auxiliary has organized an event dedicated to the Armenian Language,

also to take place on Sunday, October 28, at 5:00 p.m. at "Gugasian" Hall. All proceeds will benefit A.G. Minassian School.